Բ հուլիս, 2020

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Հոգևոր Կարիտաս
Caritas Spirituality

Հայկական Կարիտասի հոգևոր պարբերաթերթը The Spiritual Magazine of Armenian Caritas

ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Ի՞նչ է աշխատանքը՝ Եկեղեցու սոցիալական ուսմունքի տեսանկյունից

Մենք բոլորս՝ ովքեր աշխատում ենք Եկեղեցու առաքելության մեջ՝ հոգևոր, բարոյական կամ սոցիալական առաքելության դաշտում և ծառայում ենք մարդ անհատին՝ իր ֆիզիկական կամ սոցիալ-հոգեբանական խնդիրներով և կյանքի յուրահատուկ պայմանների մեջ, Տեր Հիսուս Քրիստոսի կողմից հրավիրված ենք մեր աշխատանքի գաղափարին և իրականությանը նայելու Ի՛ր տեսանկյունից՝ որպես օրինակ ունենալով Իր կյանքը և առաջնորդվելով Իր ուսուցումներով, որն այսօր Եկեղեցին մեկնաբանում է՝ ելնելով ժամանակակից կյանքի մարտահրավերներից և ժամանակակից լեզվով:

Դեռևս Եդեմի պարտեզում Աստված Ադամին ու Եվային պատվիրեց խնամել և պահպանել Եդեմի պարտեզը (Ծնն. 2, 15): Հետևաբար, աշխատանքը աստվածային պատվիրան է: Աստված ի սկզբանե կամեցավ, որ մարդն իր աշխատանքով նմանվի իր Արարչին, որ ստեղծեց ամբողջ տիեզերքը և արարում է մշտապես, նաև այսօր: Ուրեմն, **աշխատանքը Աստծուն նմանվելու մի ճանապարհ է**. մարդը ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ և կոչված է անդադար աշխատանքով և ինքնազարգացմամբ կատարյալ դարձնելու իր նմանությունը Արարչի հետ: Աշխատանքով նաև մարդը կոչված է հոգ տանելու արարչագործության մասին և ապահովելու համընդհանուր ներդաշնակությունը՝ Աստծո, մարդու և ամբողջ արարչագործության միջև: Ուրեմն, կարելի է ասել, որ **աշխատանքը նաև մարդու կոչումն է**: Աշխատանքը դիտարկում ենք լայն իմաստով՝ որպես տարատեսակ ջանադրություն՝ ինքնազարգացման և միջավայրի պահպանության, առավել կատարելագործման համար՝ համագործակցելով Արարչի հետ: Ուրեմն, շեշտենք ևս մեկ փաստ. **աշխատանքը համագործակցություն է Աստծո հետ** կամ համագործակցություն՝ աստվածային արարման մեջ՝ ի շահ մարդու և տիեզերքի և ի փառս Աստծո:

Մարդկային աշխատանքի ներդաշնակությունը աստվածային արարչագործության և արարածների հետ խախտվեց մարդկային մեղքի հետևանքով:

Մարդու անկման հետևանքով երկիրն անիծվեց Աստծո կողմից.

«*Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին և կերար այն ծառի պտղից, որից միայն քեզ պատուիրեցի չուտել, բայց կերար դրանից, թող անիծեալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը՝ քո կեանքի բոլոր օրերին: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը և դու դաշտային բոյսերով սնուես: Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծուեցիր, որովհետև հող էի և հող էլ կը դառնաս*», Ծնն. 2, 17-19:

Այս անեծքի ամբողջ պատասխանատվությունը մարդու ուսերին է. այդքա՞ն կարևոր է մարդը ամբողջ արարչագործության մեջ: Մարդու յուրաքանչյուր արարք, բերանից դուրս ելած խոսք, հավատքը կամ անհավատությունը ահռելի մեծ կարևորություն ունի Աստծո առաջ և ամբողջ տիեզերքի կյանքի որակի համար: Մարդուն այսքան կարևորելու փաստը ապշեցնում է սաղմոսերգուին, որ բացականչում է. «*Մարդն ի՞նչ է, որ յիշում ես նրան և մարդու որդին, որ այցելում ես նրան: Մի փոքր ցածր դասեցիր դու նրան հրեշտակների առջև, փառք ու պատուով պսակեցիր դու նրան, տէր կարգեցիր նրան քո ձեռքի գործերի վրայ, ամէն ինչ դրեցիր նրա ոտքերի առաջ*» Սղմ. 8, 5-8:

Մարդը չհասկացավ իր պատասխանատվության ա՛յսչափ կարևորությունը և կործանեց սկզբնական ներդաշնակությունը, բայց, արտաքսված լինելով Եդեմի պարտեզից, աշխատելու և երկիրը խնամելու պարտականությունը տարավ իր հետ՝ որպես առավել ծանրացած մի խնդիր: Աշխատանքը դարձավ ծանր հոգնություն՝ քրտինքով, տառապանքով, հուսահատություններով լի, բայց նաև բազում հաջողություններով ուղեկցվող մի պարտականություն: Եթե Եդեմի պարտեզում մարդը հոգ չէր անում գնահատելու իր աշխատանքը, քանի որ հեշտությամբ էր այն կատարում՝ ընդհանուր ներդաշնակության մեջ, ապա երբ իր մեղքով կորցրեց այդ ներդաշնակությունը և փոխարենը ստացավ մեղքի հետևանքները՝ հիվանդությունները, ֆիզիկական թուլությունը, սահմանափակումները, մահը, ապա ամբողջ պատմության ընթացքում մարդու առջև Աստծո կողմից դրված է եղել մի խնդիր՝ ամեն վայրկյան վերաիմաստավորել իր աշխատանքը, հասկանալու այն այնպես, ինչպես Աստվա՛ծ է սահմանել և իր մտահորիզոնից չկորցնել սեփական աշխատանքի հոգևոր, բարոյական նպատակը, սիրել իր աշխատանքը, որպեսզի կարողանա հաղթահարել աշխատանքային ահռելի բարդությունները: Ինչը, որ մարդը չգնահատեց նախկինում, հիմա պետք է *սովորի* գնահատել, սիրել ու կատարելագործել, որովհետև ինքն իր և արարչագործության մասին հոգ տանելու աստվածադիր խնդիրը մնում է անփոփոխ (հմմտ.՝ Սոց. ուսմունք, 256):

Սակայն, Եդեմի պարտեզից արտաքսվելուց հետո աշխատանքի **ծանրությունը պատիժ չէ և ոչ էլ՝ անեծք**, այլ՝ մեղսագործության հետևանք, որը մարդը կոչված է հաղթահարել՝ իր գոյապահպանության համար, իր աշխատանքը կատարելով՝ Աստծո տված բարոյական սկզբունքները պահելով և հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին, որովհետև Հիսուս Քրիստոսին հետևելո՛վ միայն մարդը կարող է դարձյալ վերականգնել աշխատանքի արժանապատվությունն ու ճշմարիտ իմաստը, նպատակը, որն է՝ Աստծո հետ միությունը:

Հիսուսը՝ աշխատավորի կատարյալ օրինակ

Հիսուսը մինչև երեսուն տարեկան խոնարհությամբ աշխատեց Սուրբ Հովսեփի արհեստանոցում, դազգահի առաջ և իր երեսի քրտինքով վաստակում էր իր հացը: Այսպես՝ խոնարհությամբ և լռության մեջ աշխատելով՝ Հիսուս իր աստվածային անձով վերականգնեց աշխատանքի արժանապատվությունը և մեզ տվեց մի կատարյալ օրինակ և ուսուցում՝ առ այն, որ ցանկացած աշխատանք ունի իր ուրույն արժեքը՝ պայմանով, որ այն կատարենք՝ հարգելով սոցիալական և բնական միջավայրը, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը:

Հիսուսը սովորեցնում է, որ մարդը չպետք է դառնա իր ստեղծած նյութական արժեքների գերին, այլ պետք է մտածի նախևառաջ աշխատանքով իր հոգին փրկելու մասին. «*Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի և իր անձի կորցնի, որովհետև մարդ ի՞նչ ունի տալու իր անձի փոխարէն*», Մրկ. 8, 36: Երկրային բարիքները ժամանակի ընթացքում հնանում են, մաշվում, քայքայվում, ցեց ու ժանգ փչացնում են դրանք, իսկ Երկնքում ունեցած գանձերը երբեք չեն կորում, այլ ապահովում են մարդուս մուտքը Երկինք. «*Ուր որ ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կը լինեն», Մտթ. 6, 19:*

Աշխատանքը չպետք է լինի մտահոգության, վախի առիթ. մարդ, ով անընդհատ տարված է այն մտքերով, թե ինչ պիտի ուտի կամ հագնի այսօր և վաղը, կարող է կորցնել ամենակարևորը՝ Աստծո արքայությունը, Աստծո հետ մտերմությունը և, ի վերջո, իր հոգին. «*Հոգ մի՛ արէք և մի ասէք, թէ ինչ պիտի ուտենք, կամ ինչ պիտի խմենք կամ ինչ պիտի հագնենք, որովհետև հեթանոսներն են այդ բոլորը որոնում. քանի որ ձեր*

երկնաւոր Հայրը գիտէ, թէ այդ բոլորը ձեզ պէտք է: Նախ խնդրեցէ՛ք Աստծու արքայութիւնը և արդարութիւնը, և այդ բոլորը Աստուած ձեզ աւելիով կտայ», Մտթ. 6, 33:

Աստծո արքայությունը մեր մեջ է, մեր սրտերում, մեր մտադրությունների և նպատակների հիմքում, եթե բաց ենք Աստծո կամքի առջև և ուզում ենք, որ Աստված իր զորությամբ ներկա լինի մեր կյանքում և թագավորի մեր սրտերում: **Աստծո արքայությունը՝ մարդու կողմից Աստծուն արժանի բացարձակ կարևորություն տալն է՝ իր կյանքում և նպատակների մեջ**:

Աստծո փառքը և Աստծո հետ մշտական միությունը պետք է լինի մարդու բոլոր ձգտումների, ջանքերի, աշխատանքի հիմնական շարժիչ դրդապատճառը և նպատակը՝ ճիշտ ինչպես Արարիչն Աստված մարդու և ամբողջ աշխարհի գոյության դրդապատճառն ու նպատակն է:

Բայց ինչպե՞ս կարելի է աշխատանքը ծառայեցնել Աստծո փառքին. Սա՛ է ամենակարևոր հարցադրումը:

Դարձյալ Հիսու՛սն է, որ մեզ տալիս է այս հարցի պատասխանը և կատարյալ օրինակը: Նախ հարկավոր է ճիշտ հասկանալ մեր կյանքի, մերձավորի, բնական միջավայրի, նյութական բարիքների, մեր կարողությունների արժեքը և դրանք ընդունել որպես բացարձակ *պարգևներ Աստծո կողմից*, պարգևներ, որոնք մարդն իր ազատությամբ պարտավոր է օգտագործել՝ ոչ միայն իր, այլև՝ մերձավորի և ամբողջ արարչագործության օգտի համար: Օրինակ, նյութական բարիքներ ստեղծելով՝ հարկավոր է միշտ դրանցից բաժին հանել աղքատներին: Բայց աշխատանքի տեսակները բազմազան են: Ստեղծվում են նաև հոգևոր արժեքներ, մատուցվում են ծառայություններ՝ բժշկական, սոցիալական, հոգեբանական, խորհրդատվական: Ավետարանացումը, Տիրոջ խոսքի քարոզը, աղոթքը՝ մերձավորի համար, եկեղեցական խորհրդակատարությունները ևս աշխատանք են: Հիսուս երեսուն տարեկանում, հյուսնի աշխատանքից հետո սկսեց Ավետարանի քարոզությունը, նա անխոնջ աշխատում էր՝ մարդկային հոգիները փրկելու, հիվանդներին բուժելու, մեղքի ու մահվան գերությունից ազատելու համար: Հիսուսի աշխատանքը գումար վաստակելու, իր կյանքի պայմանները բարելավելու համար չէր, այլ՝ միայն ու միայն մարդուն օգնելու և Աստծուն փառավորելու համար: Հիսուս չէր աշխատում օրով ու ժամով, այլ՝ միշտ և առանց ժամանակը հաշվելու, ժամը փողի վերածելու: Հիսուս իր օրինակով սովորեցնում է, որ աշխատանքը իրականում պետք է լինի ծառայություն, որի ճշմարիտ հասցեատերն, ի վերջո, Աստված է:

Աշխատանքը ծառայություն է

Ցանկացած աշխատանք քրիստոնեական իմաստով ծառայություն է, եթե նպատակը մարդու ամբողջական՝ հոգևոր, բարոյական և ֆիզիկական, զարգացմանը նպաստելն է, մարդու բնական միջավայրի կատարելագործումն է՝ հետևելով բնական, աստվածադիր օրինաչափություններին, մարդու բարեկեցության և միջավայրի պահպանությունն է՝ սիրո և հոգատարության հստակ, միասնական քայլերով:

Աշխատանքի բոլոր ոլորտներում մարդը կոչված է իր աշխատանքը կատարել՝ սիրո սկզբունքի հիման վրա: Իսկ սիրել պետք է նախևառաջ մարդուն՝ իր կարիքների մեջ, իր անսահման հոգևոր և բարոյական ներուժով, իր սահմանափակություններով և թուլություններով հանդերձ, որովհետև մա՛րդն է արարչագործության գլուխգործոցը, որ կրում է Աստծո պատկերն ու նմանությունը:

Մարդուն սիրելո՛վ միայն կարելի է նրան սովորեցնել սիրել, ներել, հավատալ, վստահել ինքն իրեն և իր Արարչին, ընկերոջը, վերականգնել մարդու արժանապատվությունը՝ որպես աստծո պատկերը կրող և սրբության կոչված արարած:

Ուրեմն, խորքային իմաստով կարելի է ասել, որ սիրե՛լը և սիրո գործեր կատարե՛լն է, որ աշխատանքը դարձնում է ծառայություն: Սիրե՛լն է մարդու ամենակարևոր աշխատանքը. սիրել Աստծուն, սիրել մերձավորին և սիրել ինքդ քեզ՝ որպես Աստծո սուրբ պատկեր:

Այս իմաստով, գերագույն օրինակը քրիստոնյայի համար մնում է Հիսուս Քրիստոսը, ում հետ միության մեջ է ամբողջանում սիրո գործերի քրիստոնեական իմաստը և նպատակը: Հիսուսի հետ միության մեջ լինելը, նրա քայլերին հետևելը հնարավոր է ճշգրիտ ձևով անել միայն Քրիստոսի մեկ և սուրբ Եկեղեցու մեջ լինելով, Քրիստոսին հավատացողների ընտանիքի մեջ և այդ ընտանիքի անդամների հետ միասին:

Ըստ այդմ, **Հայկական Կարիտասի առաքելությունը առաջ է գնում և զարգանում է Աստծուն հաճելի և ընդունելի ձևով՝ քանի դեռ Եկեղեցու ընդհանուր առաքելության հունի մեջ է և արտահայտում է այդ առաքելության սոցիալական կողմը**:

Եկեղեցու առաքելության հունի մեջ ցանկացած աշխատանք պետք է ընկալվի որպես ծառայություն՝ հանուն մարդու կատարյալ կերպարի և, հետևաբար, ծառայություն՝ Աստծուն:

Այս տեսանկյունից դիտելով՝ Քրիստոսի կյանքի ուսումնասիրությունը, նրա մարդկային որակների ուսումնասիրությունը և ընդօրինակումը ամենամեծ աջակցությունն է Կարիտասի աշխատակցի համար, հատկապես, նրանց համար, ովքեր անմիջապես շփվում են աջակցության կարիք ունեցող անձանց հետ: Անշուշտ, աղքատներին, հաշմանդամներին, տարեցներին և այլ խոցելի խմբերին աջակցելու համար ժամանակակից աշխարհում անհրաժեշտ են ոլորտային մասնագիտական որակյալ հմտություններ և փորձառություն, որոնք, սակայն, *պետք է ուղղորդվեն և մշտապես իմաստավորվեն Քրիստոսի հետ միությամբ, հանուն Աստծո սիրույն՝ մերձավորին օգտակար լինելու մնայուն դիտավորությամբ, Ավետարանի սկզբունքներով*: Այլ խոսքով՝ Եկեղեցու սոցիալական առաքելության մեջ աշխատողը՝ վճարվող թե կամավորական, պետք է զարգացած լինի համակողմանիորեն՝ 1.որպես մարդ, 2.մասնագիտորեն և 3.հոգևոր նկարագրով՝ որպես իր մասնագիտական առաջընթացի հիմնական աղբյուր ու նպատակ ունենալով Քրիստոսին: Քրիստոսի մարդկային կենսակերպը նրա համար պետք է լինի գերագույն չափորոշիչը՝ որոշելու համար, թե այս կամ այն աշխատանքային սկզբունքը կամ մեթոդն արդյոք ճշմարիտ է՝ հոգևոր, բարոյական, մարդու իրավունքների պաշտպանության և մարդ անհատի զարգացման, վերականգնողական ընթացքի իմաստով, թե շեղված է:

Աշխատանքը ապրելակերպ է

Բայց Քրիստոսի կենսակերպը սառը օրենսդրական կամ մասնագիտական չափորոշիչ չէ, այլ օրինակ է, որ ոչ մի այն մեր աշխատանքը, այլ նախևառաջ մեր կյա՛նքը ձևավորենք ըստ Քրիստոսի կյանքի: Քրիստոսի աշխատանքը կամ ծառայությունը իրականում զուտ աշխատանք չէր, այլ ավելի՝ ապրելակերպ, լինելության ձև՝ modus vivendi, հետևաբար, Կարիտասի աշխատակիցը կամ Եկեղեցում ծառայողը պետք է ինքն իր հանդեպ առավել պահանջկոտ լինի՝ ոչ միայն աշխատանքի ժամերին, այլև՝ աշխատաժամերից դուրս ևս, իր կենսակերպի մեջ, աղոթքի կյանքում, Եկեղեցու պաշտամունքային արարողություններին մասնակցելու մեջ, ներքին ձգտումների, աշխարհայացքի մեջ, երազանքների մեջ: Սա պետք է լինի ոչ թե վարչական պարտադրանքով, այլ՝ խորապես ներքին, բացարձակապես ազա՛տ ընտրությամբ, բայց վճռակա՛ն որոշմամբ, պետք է կախված չլինի նաև աշխատավարձի չափից, պաշտոնից, տնօրենի խստությունից, գործընկերների մասնագիտական կամ մարդկային որակներից, որովհետև Եկեղեցու կամ Կարիտասի առաքելության մեջ աշխատանքի անցնելիս՝ մենք ստանձնում ենք այսուհետ և ընդմիշտ պատասխանատու լինել նախ Աստծո առաջ, Տեր Հիսուս Քրիստոսի՛ առաջ և մեր խղճի՛ առաջ, որ Աստծո ձայնն է՝ մարդու սրտում:

Կարիտասում աշխատանքի ընդունվելիս՝ հարցազրույցի ժամանակ այս ամենը, գուցե, չեն ասում, բայց պետք է միշտ գիտակցել, որ Եկեղեցում կամ Կարիտասում աշխատանքի անցնելիս՝ իրականում հանձն ես առնում ***աշխատել Աստծո մոտ և Աստծո համար***, որովհետև աշխատում ես Աստծո զավակների համար և Աստծո պարտեզում՝ Քրիստոսի Ընտանիքում, այսինքն՝ Նրա Սուրբ Եկեղեցու մեջ՝ որպես գործուն անդամ, որի հաջողությունը, սրբությունը, սիրելու կարողությունը, նմանապես և հակառակը՝ անհաջողությունը, արատավոր կյանքը, անտարբերությունը, վեճեր հարուցելու մոլուցքը, միայն փողի մասին մտածելը անպայմանորեն *ազդում են բոլոր անդամների ծառայության և հոգևոր նկարագրի վրա* և, ի վերջո, Քրիստոսի Եկեղեցու անվան վրա, որովհետև Եկեղեցին հոգևոր իրողություն է, սրբության կրող, բայց այս աշխարհում ապրում և գործում է մարդկանց միջոցով, որոնց մեջ կան և՛ սրբեր և՛, ցավոք, մեղավորներ:

Մենք պետք է միշտ հիշենք, որ մարդկային օրենքները, համընդհանուր հռչակված արժեքները հարգելը, առաջատար տեխնոլոգիաներից օգտվելը, ազատամիտ լինելը, սեփական տեսակետներ ունենալը, քննադատաբար վերլուծելը, առաջընթացին համաքայլ գնալը լավ է և անհրաժեշտ, բայց, որպես քրիստոնյա առաքելության նվիրյալներ, մեզ համար ***ամենակարևորը պետք է միշտ մնա երկու հազար և ավելի տարիներ առաջ սիրո և արդարության համար մահապարտի խաչին գամված երեսներեքամյա Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, և նրա կրակած Ավետարանը***, որը միշտ արդիական է:

Ուրեմն, աշխատելիս նմանվել Քրիստոսին՝ նշանակում է՝

-աշխատել խոնարհությամբ,
-աշխատանքը կատարել պատշաճ ձևով,
-յուրաքանչյուր աշխատանք համարել արժանապատիվ,
-աշխատել նվիրումով և առաքելության նպատակի հստակ գիտակցությամբ,
-սիրել աշխատանքը, սիրել մարդկանց, ում հետ աշխատում ես և սիրել նրանց, ում համար աշխատում ես,
-պատրաստ լինել անել միշտ ավելին, քան պահանջվում է՝ ստեղծարարությամբ, հավատով, վստահությամբ,
-պատրաստ լինել միշտ ունեցածդ լավագույնը՝ ժամանակդ, գիտելիքներդ և հմտություններդ նվիրել՝ հանուն առաքելության և լավագույն արդյունքների:

Դժվարին պահերին պետք է միշտ նայել Խաչյալ Հիսուսին և հիշել, որ Նա Իր կյա՛նքը տվեց՝ հանուն Իր աշխատանքի՝ հանուն մարդու փրկության:

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

«Գովեմ զՔեզ (Laudato Si’)» բնապահպանական-սոցիալական նամակի 5-րդ տարեդարձը

«Այսօր պետք է հասկանալ, որ ճշմարիտ բնապահպանական մոտեցումը միշտ վերածվում է սոցիալական մոտեցման. բնական միջավայրի մասին քննարկումներում պետք է ընդգրկել սոցիալական արդարության հարցերը, որպեսզի ականջալուր լինենք և՛ երկրի աղաղակին և՛ աղքատների աղաղակին»
L. S. 49

Այս տարի՝ մայիսի 24-ին, լրացավ Ն. Ս. Ֆրանցիսկոս Քահանայապետի «Գովեմ զՔեզ (Laudato Si’)» բնապահպանական-սոցիալական շրջաբերական նամակի 5-րդ տարեդարձը: Այս գրությունը առանցքային նշանակություն ունի՝ Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի զարգացման ընթացքում: Այն ներկայացնում է բնապահպանական խնդիրների մասին Եկեղեցու նորագույն դիրքորոշումը, որտեղ առաջին անգամ մեծ շեշտադրություն է կատարվում է բնապահպանության և սոցիալական հիմնախնդիրների միջև օրգանական կապին և առաջ է քաշվում է «**համակողմանի բնապահպանություն**»՝ «**integral ecology**», հասկացությունը: Այս նամակը ոչ միայն տեսական գիտելիքների և գաղափարաբանության կարևոր ձեռքբերում է, այլև՝ ուղենշային գործիքակազմ է՝ գտնելու արդյունավետ լուծումներ՝ ներկայիս բնապահպանական և սոցիալական խնդիրների համար՝ ստեղծելով *միասնական* ջանքերով մարտահրավերների դիմագրավելու տեսական և գործնական հիմքեր: «Գովեմ զՔեզ» նամակի սկզբունքները անցած հինգ տարիների ընթացքում ուսումնասիրվել, ընդունվել ու կիրառվել են ոչ միայն եկեղեցական հաստատությունների, այլև՝ բնակլիմայական հարցերով զբաղվող համաշխարհային կազմակերպությունների և փորձագետների կողմից: Հետևաբար, այս նամակի դրույթներին անդրադառնալը, վերստին խորհրդածելը շատ կարևոր է, մանավանդ, Հայկական Կարիտասի համար, որ սկսում է բնապահպանական լայնամասշտաբ ծրագրերի իրականացման մի գործընթաց, այն էլ՝ մի երկրում, որտեղ կան լուրջ բնապահպանական խնդիրներ և աղքատության բարձր մակարդակ: Այս թերթի համարներում հաջորդաբար՝ մինչև տարեվերջ, կներկայացնենք նյութեր՝ «Գովեմ զՔեզ» նամակի մասին և հատվածներ՝ նամակից:

«Գովեմ զՔեզ» շրջաբերականի համառոտ էությունը. ինչպե՞ս հաղթահարել ճգնաժամը

«Գովեմ զՔեզ» շրջաբերական նամակի բովանդակության մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար առանձնացրել ենք մի քանի դրույթներ՝ հնարավորինս սեղմ շարադրանքով:
«Ինչպիսի՞ աշխարհ ենք թողնելու մեր հաջորդներին՝ այսօր տարիք առնող երեխաներին» (160).սա է շրջաբերականի հիմնական հարցը: Այս նամակը միայն միջավայրի պահպանության մասին չէ, այլ կոչ է անում մեզ հարցադրումներ անել մեր գոյության իմաստի և սոցիալական կյանքի արժեքների մասին.
«*Ո՞րն է մեր կյանքի նպատակը, մեր աշխատանքի նպատակը…ինչու՞ երկիրը մեր կարիքն ունի…մինչև չառերեսվենք այս մեծ խնդիրների հետ, մեր մտահոգությունը բնապահպանությամբ անլուրջ արդյունքներ կունենա*».գրում է Ֆրանցիսկոսը:
Շրջաբերականի անունը, որը Սբ. Ֆրանցիսկոս Ասսիզեցու աղոթքից է՝ Laudato si՝ Գովեմ զՔեզ, հիշեցնում է մեզ, որ երկիրը՝ մեր ընդհանուր տունը, «*նման է քրոջ, ում հետ կիսում ենք մեր կյանքը, և մոր, ով մեկնում է իր ձեռքերը՝ մեզ գրկելու համար*» (1): *Մենք մոռանում ենք, որ ինքներս հող ու փոշի ենք, մենք շնչում ենք այդ մոր օդը և զովանում նրա ջրերով* (2):
Այս երկիրը հիմա շահագործում են անխնա, այն ողբում ու աղաղակում է: Պապը հրավիրում է մեզ ականջ դնելու այդ աղաղակին կոչ է անում «**բնապահպանական դարձի**»՝ օգտագործելով Հովհաննես Պողոս Բ-ի արտահայտությունը:
Շրջաբերականում Պապը հույս է հայտնում, որ մարդկությունը դեռևս ունակ է դրական միջամտություն անելու (58), մարդիկ ունակ են իրենք իրենց հաղթահարելու և նոր մեկնարկ տալու (205): Պապը ամբողջ մարդկությանը հրավիրում է երկխոսության՝ միասին գործելու հանուն ընդհանուր տան բարօրության:
«*Շատ գիտնականների, փիլիսոփաների, աստվածաբանների և քաղաքացիական խմբերի խորհրդածությունները… հարստացրել են Եկեղեցու մտածողությունը այս հարցերի շուրջ*» (7), փաստում է նամակը և դրանով իսկ փաստում Եկեղեցու բաց լինելը՝ գիտական մտքի ու պարզ մարդկանց մտածումների առջև:
Առաջին գլխում փաստվում է, որ կլիմայի փոփոխության բացասական հետևանքները առաջին հերթին իրենց մաշկի վրա զգում են աղքատները, իսկ նրանք, ովքեր տիրապետում են շատ ռեսուրսների և տնտեսական ու քաղաքական իշխանության, մտահոգվում են միայն խնդիրները կոծկելով (26):
Այսպիսի ողբերգությունների նկատմամբ ոչ պատշաճ արձագանքը խոսում է պատասխանատվության զգացումի կորստյան մասին՝ մեզ նման մարդկանց հանդեպ, որոնց վրա է հիմնված ամբողջ քաղաքացիական հասարակությունը, (25) գրում է Պապը:
Մոլորակի էկոհամակարգը, կենդանական և բուսական աշխարհի բազում տեսակներ վտանգված են բնական ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործման, սպառողական մշակույթի անսանձելիության հետևանքով, իսկ գիտական միտքը, որը կարող է լուծումներ մշակել էկոլոգիալական խնդիրների վերացման համար, հաճախ ծառայում է փողի ու սպառողական մշակույթի քմահաճույքին:
Երկրորդ գլխում Պապն առաջարկում է մարդկությանը ուշադրություն դարձնել Սուրբ Գրքին և վաղ քրիստոնեական ավանդությանը, որոնք կօգնեն գիտակցել արարչագործության հանդեպ մարդու մեծ պատասխանատվությունը, որն Աստծուց է. Աստված մարդու՛ն է հանձնարարել երկրի խնամքը, որպես համընդհանուր բարիք և պատասխանատվություն:
«*Մարդկային կյանքը հիմնված է երեք հիմնարար և սերտորեն փոխկապակցված հարաբերությունների վրա՝ Աստծու, մերձավորի և երկրի հետ: Ըստ Սուրբ Գրքի, այս երեք կենսական հարաբերությունները խզվել են… մեղքի հետևանքով*» (66):
Աստծո պատկերով ստեղծված լինելը և երկրին տիրելու մասին աստվածային պատվիրանը չի արդարացնում մեր եղբայրների և այլ արարածների վրա տիրելու մեր ցանկությունը. մարդիկ պատասխանատվություն ունեն՝ խնամելու աշխարհի պարտեզը՝ ի մտի ունենալով այն ճշմարտությունը, որը

արարածների գոյության նպատակը մարդը չէ, այլ՝ Աստված (83), կամ արարչագործությունը՝ Աստծո հետ ներդաշնակ կյանքով:

Մարդը եզակի տեղ ունի արարածների մեջ և դրանով իսկ՝ մեծ պատասխանատվություն՝ հոգ տանելու բոլոր արարծների և իր եղբայրների ու քույրերի հանդեպ: Պետք է գիտակցել, որ գոյություն ունի «*փիեզերական միություն, որը կյանքի է կոչվել մեկ և միակ Հոր կողմից: Յուրաքանչյուրս կապված ենք անտեսանելի կապերով և կազմում ենք փիեզերական մի ընտանիք՝ մի վսեմ միություն, որը մեզ լցնում է սուրբ, ջերմ և խոնարհ հարգանքով*» (89):

Երրորդ գլխում Սրբազան Պապը խոսում է **տեխնոկրատ հասարակության** մասին:

Տեխնոկրատ տիրապետության մտածողությունն է հանգեցնում բնության ոչնչացմանն ու մարդկանց շահագործմանը:

«Ժամանակակից կյանքը հատկանշվում է չափազանցված մարդակենտրոնությամբ (antrhropocentrism)» (116). մարդիկ այլևս չեն հասկանում իրենց ճիշտ տեղը աշխարհի նկատմամբ և ինքնակենտրոն դիրք են բռնում՝ կենտրոնացած բացառապես սեփական «ես»ի և իշխանության վրա: Հետևանքը «օգտագործման և դեն նետելու» տրամաբանությունն է, որն արդարացնում է վատնումի ցանկացած տեսակ, լինի միջավայրի կամ մարդու: Վատնումի մտածողությունը մարդուն և բնությանը վերաբերում է որպես պարզ առարկաների և հանգեցնում տիրապետության զանազան ձևերի: Այս մտածողության հետևանքն են երեխաների շահագործումը, ծերերին լքելը, մարդկանց ստրկացնելը, գերագնահատելը շուկայի ինքնակարգավորման հնարավորությունը և այլն: Նույն մտածողությունն ունեն մաֆիաները, թմրանյութեր վաճառողները, չծնված երեխաներին աբորտով հեռացնողները… (123)

Պապը չի շրջանցում նաև փոքր ձեռնարկատերերի ու հասարակ գյուղացիների խնդիրները, որոնք հետևանք են գյուղատնտեսական հողերի՝ մի քանի հարուստների ձեռքում կենտրոնացած լինելու փաստի:

Սոցիալական խնդիրները չի կարելի տարանջատել շրջակա միջավայրի խնդիրներից, որովհետև դրանք սերտորեն փոխկապակցված են պատճառահետևանքային կապով.մենք առերեսվում ենք մեկ ընդհանուր բարդ ճգնաժամի, որը և՛ սոցիալական է, և՛ բնապահպանական (139), վստահ է Քահանայապետը:

Վերլուծությունները, տեսությունները բավարար չեն, համոզված է Պապը, այլ հարկ է երկխոսություն հաստատել ոչ միայն միջազգային, այլև՝ անհատական մակարդակով, սա կօգնի հաղթահարել ինքնաոչնչացման պարույրը, որը կլանում է մեզ (163):

Եկեղեցին չի հավակնում գիտական հարցեր լուծել կամ իրենով փոխարինել քաղաքականությունը: «Բայց ես ուզում եմ խրախուսել ազնիվ և բաց քննարկում, որպեսզի մասնավոր շահերն ու գաղափարախոսությունները չվնասեն համընդհանուր բարիքին». գրված է 188-րդ կետում:

Քննադատելով միջազգային կառույցների անկարողությունը և քաղաքական կամքի բացակայությունը՝ լուծելու լուրջ խնդիրները՝ Պապը գրում է.

«*Ի՞նչը պետք է դրդի մեկին… կառչել իշխանությունից՝ միայն այն բանի համար, որ իրեն հիշեն, թե ընդունակ չի եղել քայլեր ձեռնարկելու, երբ հրատապ էր ու անհրաժեշտ*» (157):

Ցանկալի արդյունքներ ունենալու համար հարկ է սկսել կրթությունից՝ դպրոցում, ընտանիքներում, լրատվամիջոցներում, կրոնագիտության դասերում և այլուրեք:

Պետք է որդեգրել նոր կենսաձև և կարողանալ առողջ ճնշում բանեցնել քաղաքական, տնտեսական ու սոցիալական իշխանություն ունեցող անձանց վրա:

«…*որպես հավատացյալներ, մենք աշխարհին նայում ենք ոչ թե դրսից, այլ՝ ներսից՝ գիտակից այն կապերին, որոնցով Հայրը մեզ կապել է բոլոր արարածներին: Զարգացնելով մեր անհատականությունը, աստվածատուր կարողությունները՝ բնապահպանական դարձը կարող է ներշնչել մեզ ավելի մեծ ստեղծագործական աշխատանքի և խանդավառության*» (220):

«*Երջանկությունը նշանակում է՝ իմանալ ինչպես սահմանափակել որոշ կարիքներ, որոնք միայն արժեզրկում են մեզ, և բաց լինել այլ շատ հնարավորությունների առջև, որոնք առաջարկում է կյանքը*», գրում է Քահանայապետը 223-րդ կետում:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԷՋԵՐ՝ ՄԱՏՉԵԼԻ ԼԵԶՎՈՎ

Ինչու՞ է կարևոր՝ եկեղեցում ժողովրդի հետ միասին աղոթելը և Սուրբ Պատարագին մասնակցելը

Այսօր գոյություն ունի մի շատ կարևոր փաստ, որ համատարած է. այն է՝ հավատքը միայն անհատական պատկերացումների մեջ սահմանափակելու երևույթը, երբ մարդիկ կարևորություն չեն տալիս բոլորի հետ միասին եկեղեցում աղոթելուն և կիրակնօրյա Սուրբ Պատարագին մասնակցելուն: Սա անաստվածության պետական քարոզչության տարիների և մեր օրերում հոգևորի հանդեպ ընդհանուր և անտարբերության կամ անբավարար հետաքրքրվածության հետևանք է: Այսօր Աստվածաշունչը, Եկեղեցին, հոգևոր աճը կարևոր տեղ չունեն մեզանից շատերի առօրյայում, որը հագեցած է սոցիալական հարցերով, գյուղատնտեսական ծանր աշխատանքով, ընտանեկան խնդիրներով:

Աստծո առաջ պարտականություններ ունենալու գաղափարն այսօր ի սպառ բացակայում է համայնքի մեծամասնության պատկերացումներից. մարդկանց թվում է, թե Աստված ամեն ինչ ներում է և կների:

Ցավոք, հոգևորը, սիրո գործերը հիմնականում տեղ չունեն նաև երիտասարդների նպատակների և երազանքների մեջ:

Հոգևորը մղված է երկրորդ պլան և մեկուսացած, մոռացված է տների սրբապատկերների անկյուններում, պատերի վրա, որտեղ տարիներով փոշոտվում են չօգտագործված աստվածաշնչերն ու վարդարանների համրիչները: Մարդիկ չեն ուզում ժամանակ տրամադրել այդ ամենին, նույնիսկ՝ մեկ ժամ՝ ամբողջ շաբաթվա մեջ:

Բայց **սա մեղք է Աստծո հանդեպ**. սա նշանակում է՝ Աստծուն արժանի տեղ չհատկացնել մեր կյանքում:

Մեզ, գուցե, թվում է՝ եթե մենք հավատում ենք, որ Աստված գոյություն ունի, ապա այդքանը բավարար է, և իրավունք ունենք խնդրելու կամ պահանջելու, որ Աստված իր առատ օրհնությունները բաշխի մեզ, իսկ երբ չենք վայելում այդ օրհնությունները, մեր աղոթքները պատասխանի չեն արժանանում, մտածում ենք, որ անօգուտ է Աստծուն աղոթելը, միևնույնն է՝ չի լսի, կամ, միևնույնն է՝ Աստծո կամքն անհայտ է մեզ: Հետևանքը լինում է այն, որ շատերն աստիճանաբար մոռանում են նաև իրենց անհատական աղոթքները կատարել կամ անում են միայն շատ ընկճված, վախեցած ժամանակ, կամ էլ նեղանում են Աստծուց և հրաժարվում որևէ քայլ անել՝ Աստծո կամքը ավելի լավ հասկանալու համար: Բայց Աստված անտարբեր չէ, Նա ճանաչում է յուրաքանչյուրիս՝ անուն առ անուն, նա գիտի մեր խնդիրները, լսում է մեր աղոթքները և «*գիտի, թե ձեզ ինչ է պետք՝ նախքան, որ դուք իրենից կխնդրեք ինչ-որ բան*», ինչպես ասում է Հիսուս (Մտթ. 6, 8): Աստված կենդանի Աստված է, մեր կյանքում ներկա է՝ մեզ համար անտեսանելի ձևով, հետևում է մեր յուրաքանչյուր քայլին և մեծ համբերությամբ սպասում է, թե երբ ենք ջանքեր գործադրելու՝ Իր հետ ավելի մտերիմ լինելու համար, թե երբ ենք ջանքեր գործադրելու, որ հասկանանք, թե ի՛նչ է Ինքը ուզում մեզանից, թե ո՛րն է Իր կամքը: Գուցե, ոչ թե Աստված է անտարբեր, այլ մե՞նք ենք թերանում Աստծո հանդեպ մեր պարտավորությունների մեջ, չէ՞ որ ոչ միայն ծնողն է պարտական զավակի հանդեպ, այլև, նախևառաջ, զավակը՝ ծնողի հանդեպ: Ուրեմն, ի՞նչ է ուզում մեր Ծնողը, մեր Արարիչ Հայրը մեզանից՝ իր զավակներից:

Հայր Աստծո կամքն է՝ յուրաքանչյուրիս ազատագրումը մեղքի գերությունից և յուրաքանչյուրիս սրբությունը, որի մեջ է կայանում մեր երջանկությունը և ներքին խաղաղությունը՝ այս կյանքում և հավիտենական կյանքում՝ Տիրոջ հետ միասին:

Աստված ի սկզբանե այս ամենը սահմանել է մարդ արարածի համար՝ որպես մարդկային կյանքի իմաստ և առաքելություն:

Աստված նաև սահմանել է, որ մեր սրբությանը և փրկությանը հասնենք Իր Միածին Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա հիմնած Մեկ, Սուրբ Կաթողիկէ Եկեղեցու միջոցով, որը մարդկության համար Նոյան տապանի նման մի նավ է, որի նավապետը Ինքը Քրիստոսն է և որի մեջ մենք կարող ենք փրկվել այս աշխարհի մեղքի ջրհեղեղից և հավիտենական դժոխքի կրակից:

Աստված Ի՛նքն է կամեցել, որ մարդն այս կյանքում ընդունի Իր աստվածային օրհնությունները, լինի երջանիկ և փրկության հասնի՝ բայց ոչ թե առանձին, մենակ աղոթելով, ոչ թե միայն իր բարեկամների հետ

մատաղ անելով և սեղան նստելով, ոչ թե միայն մկրտվելով, պսակվելով և հետո եկեղեցի չհաճախելով, այլև լիապե՛ս ապրելով՝ որպես Քրիստոսի Եկեղեցու ջերմեռանդ անդամ, միասի՛ն աղոթելով Քրիստոսի բոլոր եղբայրների և քույրերի հետ, այսինքն՝ իր ընտանիքի անդամների հետ, իր ընկերների, հարևանների, համագյուղացիների, համաքաղաքացիների հետ միասին, նաև՝ նրանց հետ, ում հետ տարաձայնություններ կան, անծանոթների հետ միասին, որովհետև Աստված սիրում է իր բոլոր զավակներին և բոլորի՛ն է հրավիրում եկեղեցի՝ միասնաբար ներկա լինելու Իր Սուրբ Սեղանի շուրջ և հարստնալու իր Իր աստվածային ներկայության հոգևոր զորությամբ, ճիշտ ինչպես իր առաքյալներին հրավիրեց Վերնատուն՝ Խորհրդավոր ընթրիքին և նրանց հետ կիսեց հացը և բաժակը՝ դրանք դարձնելով Իր Մարմինն ու Արյունը անտեսանելի, խորհրդավոր կերպով: Ճիշտ առաքյալների պես հացի և գինու տեսքով ճաշակելով Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը՝ մեր մեջ ենք ընդունում Քրիստոսի ներկայությունը, և նրա միջոցով՝ ամբողջ Սուրբ Երրորդության ներկայությունը. Աստված բնակվում է մեր մեջ, իսկ մենք՝ Աստծո մեջ, ըստ Քրիստոսի խոսքի, որն անվիճելի է և ճշմարիտ: Եկեղեցում Սուրբ Սեղանի մոտ հավաքվելիս՝ մենք յուրաքանչյուրս, ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը՝ միանում ենք ոչ միայն Քրիստոսին, այլև՝ միմյանց, որովհետև սնվում ենք նույն Քրիստոսով, Նրա միևնույն Սուրբ Մարմնով և Արյամբ, որի մեջ ներկա է Աստված ճշմարտապես, բոլորս լցվում ենք աստվածային նույն ներկայությամբ, դառնում ենք մեկ հոգևոր մարմին՝ ոչ միայն Քրիստոսի հետ, այլև՝ միմյանց հետ: Ուրեմն, հավաքվելով Տիրոջ Սեղանի շուրջ և ճաշակելով Նրա Սուրբ Մարմինն ու Արյունը, բոլոր քրիստոնյաները միմյանց հետ կապվում ենք նույն հոգևոր կապով՝ հարազատությամբ, դառնում են Քրիստոսի եղբայրները և քույրերը՝ ըստ Տիրոջ կամքի, դառնում են Քրիստոսի նույն հոգևոր կամ խորհրդավոր Մարմնի անդամները: Սուրբ Պողոս առաքյալը, որ մինչև դարձի գալը հալածում էր Քրիստոսի Եկեղեցին, երբ դարձավ Քրիստոսի առաքյալ, իր հիմնած առաջին համայնքներին գրում էր.

«*Ինչպես որ մարմինը մեկ է և բազում անդամներ ունի, և մարմնի բոլոր անդամները, որ բազում են, մեկ մարմին են կազմում, այդպես է նաև Քրիստոսը, որովհետև մենք ամենքս՝ հրեա, թե հեթանոս, ծառա, թե ազատ, մեկ Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին կազմելու համար, և ամենքս էլ նույն Հոգուց խմեցինք», Ա Կորնթ. 12, 12:*

Եկեղեցում ի մի հավաքվելով՝ մենք ընդունում ենք պարգևները նույն Սուրբ Հոգու, որը մեզ սովորեցնում է.

-առավել լավ հասկանալ Աստծուն և մեր կյանքի իմաստը,

-ավելի շատ սիրել Աստծուն,

-դարձնում է խոնարհ՝ հասկանալու մեր մեղքերը և զղջալու դրանց համար,

-դարձնում է ուժեղ՝ պայքարելու մեղքի դեմ, ապրելու սուրբ, աստվածահաճո կյանքով, սիրելու ուրիշներին՝ որպես քույրերի և եղբայրների, լինելու ներողամիտ, ապրելու միասնաբար՝ որպես Աստծո մեկ ժողովուրդ, որպես կենդանի Եկեղեցի՝ հոգևոր ամենօրյա գործունյա ավյունով:

Իսկ միայնակ աղոթելով, տանը մնալով և միայն առօրյա գործերով զբաղվելով՝ այս ամենն ունենալն անհնարին է, և մեղքի մեջ ակամայից ընկնելը՝ շատ հեշտ:

Այսպես՝ միանական աղոթքով, Տիրոջ Սուրբ Խորանի առջև և Սուրբ Սեղանի շուրջ հավաքվելով՝ կազմավորվել և այսօր էլ շարունակում է կայանալ Քրիստոսի Եկեղեցին, որն, ուրեմն, պետք է հասկանանք ոչ թե միայն քարե շինության իմաստով, այլ՝ իր բուն՝ հոգևոր իմաստով՝ որպես Հիսուս Քրիստոսին և Աստծուն հավատացողների խումբ, ընտանիք, որպես Քրիստոսի խորհրդավոր, հոգևոր Մարմին:

Ա՛յս պատճառով է անհրաժեշտ և պարտադիր յուրաքանչյուրիս համար՝ մեր աղոթքը կատարել ոչ միայն առանձին, այլև՝ միասին և, հատկապես, Սուրբ Պատարագի ժամանակ՝ հաղորդվելով Տիրոջ Մարմնին և Արյանը՝ որպես Քրիստոսի հոգևոր Մարմնի՝ Եկեղեցու լիարժեք անդամներ, որ չեն ապրում առանձին Գլխից, որ Հիսուսն է, և զատված մյուս անդամներից:

Ուրեմն, միասնական աղոթքին չմասնակցելով՝ մենք մասնատում ենք Տիրոջ Եկեղեցին, քայքայում Տիրոջ ընտանիքը, վարվում եսասիրաբար և մեղք ենք գործում Աստծո և միմյանց դեմ:

Իսկ եթե ձեզանից մեկը խնդիր ունի քահանաների հետ և չի ուզում նրանց հետ շփվել, ապա միշտ պետք է մտածել, որ եկեղեցին միայն քահանաները չեն, այլ Եկեղեցին նախ Քրիստոսն է, ապա՝ դուք և բոլոր մկրտվածները՝ ներառյալ քահանաները, և ոչ ոք՝ որպես մարդ, զերծ չէ թերություններից և մեղքերից: Չի կարելի երես թեքել Քրիստոսից, Նրա Եկեղեցուց և մեղք գործել՝ մարդկանց հետ խնդիր ունենալու կամ մարդկանց թերությունները նկատելու պատճառով: Հիսուսն ասում է.

«Ինչու՞ եղբորդ աչքի միջի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը չես նկատում... Կեղծավո՛ր, նախ այդ գերանը հանիր քո աչքից, որ կարողանաս հստակ տեսնել և ապա կհանես շյուղը՝ եղբորդ աչքից», Մտթ. 7, 3-5:

Մենք բոլորս իրավունք ունենք և լիովին ազատ ենք՝ մեր կարծիքները և պատկերացումները ունենալու ցանկացած հարցի շուրջ՝ նաև հոգևոր ոլորտում, բայց երբ մկրտվում ենք և ինքներս մեզ հայտարարում ենք «քրիստոնյա», ապա պետք է հասկանանք, որ քրիստոնյա լինել՝ նշանակում է կրել Քրիստոսի անունը, իսկ դա էլ նշանակում է այն, որ մարդը ինքն իրեն համարում է Քրիստոսի հետևորդ՝ Նրա ուսուցումների, Նրա կյանքի օրինակի հետևորդ և պետք է պարտավորված զգա՝ կատարելու այն ամենը, ինչ գրված է Տիրոջ Ավետարանում և ինչ որ սովորեցնում է Քրիստոսի Եկեղեցին՝ հոգևոր սպասավորների միջոցով: Իսկ Քրիստոս պատվիրեց իր աշակերտներին՝ միշտ աղոթել ոչ միայն առանձին, այլև՝ միասին և միշտ կատարել Սուրբ Պատարագը, նույն Սեղանի շուրջ ճաշակել Իր Մարմինն ու Արյունը և այդպես հիշել այն Իր խաչելությունը, մահը և հարությունը (Ա Կորնթ. 11, 23-27):

Քրիստոսի առաքյալների հաջորդները դարերի ընթացքում եղել են եպիսկոպոսները և քահանաները, որոնք շարունակել են մատուցել Տիրոջ Սուրբ Պատարագը եկեղեցում, Քրիստոսի բառերով սրբագործել հացն ու գինին և Տիրոջ Մարմինն ու Արյունը բաշխել Տիրոջ ժողովրդին: Ոչ միայն նրանք, այլև բոլոր քրիստոնյաները Տիրոջ կողմից հրավիրված են մասնակցելու ընդհանուր աղոթքներին և Սուրբ Պատարագին, հետևաբար, ներկա չլինել Պատարագին՝ նշանակում է գիտակցաբար չկատարել Քրիստոսի պատվիրանը, ինչը ծանր մեղք է և ենթակա է արձակման՝ միայն Խոստովանություն կատարելու միջոցով:

Վստահ եմ, որ այս ամենը խորապես հասկանալով՝ չպիտի ուզենաք շարունակել ապրել մեղքի մեջ, և հիմա, երբ կարդացիք և գիտեք, առավել ևս ծանր մեղք կհամարվի ձեզ համար, եթե հեռու մնաք Սուրբ Պատարագից և շարունակեք ձեր նախկին ընթացքը:

Ի վերջո, շաբաթվա մեջ, գոնե, մեկ ժամ Աստծուն նվիրելը և Սուրբ Պատարագին մասնակցելը նաև հիմնված է Տասը պատվիրաններից 3-րդի վրա՝ «Տիրոջ օրը սո՛ւրբ պահիր»: Հրեաների համար այդ օրը սահմանվեց շաբաթ օրը, իսկ մեզ համար շաբաթ օրվանից բացի առավել կարևոր է կիրակին, քանի որ Հիսուս Քրիստոս հարություն առավ կիրակի օրը: Սուրբ պահել օրը՝ նշանակում է՝ հանգստանալ առօրյա բոլոր գործերից և օրն անցկացնել աղոթքով, Սուրբ Գիրք ուսումնասիրելով և բարեգործությամբ: Հասկանալի է, որ, մանավանդ, գյուղում պետք է միշտ կատարել նաև անհրաժեշտ շատ աշխատանքներ, որոնք կարևոր են ընտանիքի համար: Սա թույլատրելի է նաև Սուրբ Գրքով (Ելք 12, 6), բայց նաև աշխատանքի մեջ, այդ օրերին, մանավանդ, կիրակի, բոլորս պարտավոր ենք, գոնե, մեկ ժամ նվիրել Աստծուն և գնալ եկեղեցի՝ աղոթելու բոլորի հետ միասին, խոստովանելու մեր մեղքերը, հաղորդվելու Տիրոջ Մարմնին և Արյանը՝ որպես շնորհակալություն արտահայտություն աշխատանքի, բարիքների և ընտանիքի առողջության համար: Վստահ եմ, որ ձեր դժվարությունների մեջ շատ բաներ կան, որոնց համար պետք է շնորհակալություն հայտնել Տիրոջը: Իսկ շնորհակալության լավագույն ձևը Սուրբ Պատարագին մասնակցելն է:

Սիրելի՛ հավատացյալ կարիտասցիներ, Տեր Հիսուս Քրիստոս միշտ խոսում է սիրով, բայց՝ կտրուկ և հստակ, նույնիսկ, եթե Նրա խոսքերը վիրավորում են մարդուն և մտահոգության առիթ դառնում, որովհետև Տիրոջ նպատակը մարդկանց բուժելն է, սթափեցնել է՝ հոգևոր անտարբերությունից, իսկ բուժական միջամտությունները նախ ցավեցնում են, հետո՝ բուժում: Նույնն է նաև մեր՝ քահանաներիս, նպատակը և պարտականությունը: Մենք պարտավոր ենք որպես Տիրոջ կողմից կարգված պահակներ և հոգևոր ուղեկիցներ, առաջնորդներ, զգուշացնել ձեզ, որ կատարեք ձեր հոգևոր պարտականությունները և փրկեք ձեր հոգիները, ուղղեք ձեր ընթացքը և վայելեք Տիրոջ օրհնությունները ձեր և ձեր ընտանիքների համար.

«Մենք մեզ չէ՛, որ քարոզում ենք, այլ՝ Հիսուս Քրիստոսին՝ Տիրոջը, իսկ մեզ՝ որպես ձեր ծառաների՝ ի սեր Քրիստոսի: Որովհետև Աստված, որ ասաց, թե «Խավարից թող լույս ծագի», հենց Ինքը ծագեց մեր սրտերում, որպեսզի լուսավորվենք Աստծու փառքի գիտությամբ, որ ճառագայթում է Հիսուս Քրիստոսի դեմքից», Բ Կորնթ. 4, 5-6:

Տ. Հովսեփ
Հունիս, 2020

«Ո՞վ է իմ ընկերը». Ղկ. 10, 29



Բարի սամարացու օրինակով Հիսուսը մեզ բացատրում է, որ «ընկեր» հասկացությունը վերաբերում է բոլորին և, հատկապես, նրանց, ովքեր մեր օգնության կամ ուշադրության կարիքն ունեն: Այս իմաստով, մարդուն վերաբերվել ընկերոջ նման՝ նշանակում է հոգ տանել մարդու մասին, սիրել, զոհողություններ կատարել, նվիրել անշահախնդիր ձևով: Բայց անհրաժեշտ է, որ շրջապատի մարդկանց մեջ ընկեր փնտրելիս՝ նախ մե՛նք լինենք ընկեր ուրիշների համար՝ հետևելով Ավետարանի ոսկե օրենքին. «*Այն ամէնը, ինչ կը կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, նոյնը և դուք արէ՛ք նրանց, որովհետև ա՛յդ իսկ են օրէնքն ու մարգարէները*» Մտթ. 5, 12:

Մեզնից յուրաքանչյուրը նախ ի՛նքը պետք է հարգանքով, սիրով, ներողամիտ լինի դիմացինի նկատմամբ, որպեսզի ընդունվի որպես ընկեր կամ, ավելի ճիշտ կլինի ասել, որպես բարեկամ, այսինքն՝ բարին կամեցող: Կարող ենք օգտագործել նաև «մերձավոր» բառը, որ նշանակում է՝ մերձ կամ մոտ լինել մարդուն: Հնարավոր չէ դիմացինին բարին կամենալ կամ լինել մոտ, մերձավոր, եթե մարդու հետ շփվելիս միայն քո սեփական շահն ու օգուտն ես փնտրում, կամ ուզում ես շահագործել դիմացինին՝ ըստ քո քմահաճույքի, կամ չես հարգում նրա արժանապատվությունը, վերաբերվում ես ինչպես քեզնից ցածրի, չես ուզում հավասարը հավասարի նման հարաբերություն զարգացնել նրա հետ, կարծում ես, որ դու մարդկային որակներով ավելի լավն ես, քան դիմացինը, որ դու միշտ ճիշտ ես, իսկ դիմացինը՝ միշտ սխալ, չես կարող ընդունել, որ դիմացինն էլ կարող է ճիշտ լինել, իսկ դու՝ երբեմն նաև սխալ:

Հիսուս լեռան քարոզի մեջ մարդկային հարաբերությունների կառուցման շատ հստակ և արմատական պատվիրաններ է տալիս: Ասում է. «*Լսել էք, թէ ինչ ասուեց նախնիներին. «Մի՛ սպանիր», որովհետև ով որ սպանի, ենթակայ կլինի դատաստանի: Իսկ ես ձեզ ասում եմ, թէ ամէն մարդ, որ բարկանում է իր եղբօր վրայ, ենթակա կը կլինի դատաստանի, և ով որ իր եղբօրն ասի՝ հիմար, ենթակա կը լինի ատեանի, և ով որ իր եղբօրն ասի՝ ապուշ, ենթակայ կը լինի գեհենի կրակին*» Մտթ. 5, 21-22:

Հիսուս մեզ բացատրում է, որ մենք ոչ թե միայն սպանությունից պետք է հեռու մնանք, այլև՝ միմյանց վիրավորելուց, որը ևս կարող է սպանել մարդու հոգին, նվաստացնել արժանապատվությունը, հուսալքել, հասցնել բարոյական մահվան, կոտրել ինքնավստահությունը և պատճառել այլ զանազան ծանր հոգեբանական, բարոյական հետևանքներ, որոնք կարող են հավասարազոր լինել սպանությանը: Հիսուս շատ հստակ և կտրուկ բառերով մեզ արգելում է վիրավորել դիմացինին, *հիմքից* արգելում է ատելությունը, բարկությունը, որ կարող է զանազան մեղքեր ծնել: Հիսուս Արգելում է նույնիսկ երբեմն այնքա՜ն անվնաս թվացող բառերը՝ «հիմար, ապուշ», որոնք, երևի, շատ հաճախ ենք օգտագործում առօրյայում, բայց չենք նկատում, թե ինչ հետևանքներ են ունենում մեր բարկությունից կամ արհամարհանքից ծնված այդ «սովորական» բառերը: Այդ վիրավորական բառերն ասում ենք ընտանիքի անդամներին կամ ընկերներին, մարդկանց, ում հետ հաց եք կիսում, շփվում եք ամեն օր: Վիրավորական այդ բառերը այնքան ծանր են, որ Հիսուս ասում է՝ եթե դրանք ասեք, գեհենի կամ դժոխքի կրակին կարժանանաք: Գեհենը միայն անդրաշխարհում չէ, այլ սկսվում է այն պահին, երբ փոխադարձ վիրավորական բառեր են հնչում, վեճ է սկսվում, հայհոյանքներ, բռնություն, ատելություն, ոխակալություն, չարախոսություն, բամբասանք, ստախոսություն. հենց այդ երևույթների մեջ է իրական դժոխքը: Դժոխքը Աստծուն մոռացած կյանքն է: Դժոխքը տիրում է մեր սրտերում, երբ այնտեղից դուրս են գալիս այդ բառերը: Հիսուս ասում է՝ մարդուն պղծում է ոչ թե այն ինչ ներս է մտնում բերանից, այլ՝ այն, ինչ դուրս է գալիս բերանից, որովհետև բերանից դուրս է գալիս սրտում կուտակված մաղձը, մեղքի ցանկությունը:

Հակոբոս առաքյալը մարդկային լեզվի մասին գրում է հետևյալը.

«*Եթէ մէկը խօսքով չի մեղանչում, նա կատարեալ մարդ է՝ ընդունակ սանձահարելու իր ամբողջ մարմինը: Տե՛ս, թէ ինչպէս սանձեր ենք դնում ձիերի բերանը, որ նրանք մեզ հնազանդուեն. և նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք: Ահա՛ւասիկ և նաւերը. ի՞նչ հսկայ բաներ են, սաստիկ հողմերից քշւում են, բայց փոքր մի ղեկով ուղղւում են ո՛ր կողմը որ նաւավարի սիրտն ուզում է: Այսպէս էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծամեծ բաներ է բարբառում: Ահա թէ մի փոքր կրակ ինչպիսի՜ անտառներ է հրդեհում: Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրաւութեան. մեր անդամների մէջ է հաստատուած լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը և կրակով վառում մեր ամբողջ կեանքը, բորբոքուած գեհենի կրակով: Գազանների, թռչունների և սողունների ամէն տեսակ և ինչ որ կայ ծովի մէջ, հնազանդուած է և հնազանդւում է մարդկային բնութեանը, բայց մարդկանց լեզուն՝ այդ չարը, անզսպելին և մահաբեր թոյնով լցուածը, ոչ ոք չի կարող հնազանդեցնել: Նրանով օրհնում ենք Տիրոջը և Հօրը և նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծուեցին Աստծու նմանութեամբ: Նոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւններ և անէծքներ: Եղբայրնե՛ր իմ, պէտք չէ, որ այդ այդպէս լինի: Միթէ մի աղբիւր նոյն ակից քաղցր և դառն ջուր կը բխեցնի՞», Յկբ. 3, 2-10:*

Աստված լեզուն տվել է մարդուն ոչ թե մեղք գործելու համար, ոչ թե բամբասելու, հայհոյելու կամ անիծելու համար, այլ՝ Աստծուն օրհնելու համար, մարդկանց և արարչագործությունը օրհնելու համար, ընկերոջը մխիթարելու, ոգևորելու, հույս տալու, հավատք ներշնչելու համար, սիրո բառեր ասելու համար, խաղաղություն տարածելու համար.

«*Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչուեն*», Մտթ. 5, 9:

Պողոս առաքյալը եփեսացիներին գրում է.

«*Ոչ մի փգեղ խօսք ձեր բերանից թող չելնի, այլ միայն բարի խօսքը, որ շինիչ է և օգտակար, որպէսզի շնորհով լցուի նա, ով այն լսում է… Ամէն դառնութիւն, բարկութիւն, զայրոյթ, աղաղակ և հայհոյութիւն թող վերանայ ձեզնից՝ իրենց չարութեամբ հանդերձ: Միմեանց հետ եղէ՛ք քաղցր, գթած՝ ներելով միմեանց, ինչպէս որ Աստուած ներեց մեզ Քրիստոսով…*», Եփ. 4, 29-32:

Երբ տեղի ենք տալիս մեր բարկությանը, նախանձին, ատելությանը, ապա հաղթում է սատանան, իսկ Պողոսն ասում է. «*Սատանային տեղի մի՛ տուէք…զօրացէ՛ք Տիրոջով և Աստծու սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին*», Եփ. 6, 10-11:

Աստծու սպառազինությունը աստվածային շնորհներն են՝ Աստծո գերբնական զորությունները, կարողությունները, որոնք մարդն ընդունում է Աստծուց՝ որպես ձրի պարգև, իր հավատքի չափին համապատասխան: Հետևաբար, որպեսզի կարողանանք հետու մնալ սատանայի հնարանքներից և զսպված լինել, տիրապետել մեր սեփական անձին, սանձել մեր լեզուն, կառավարել մեր զգացմունքները, տեղի չտալ բարկությանը, ատելությանը, մենք կարիքն ունենք Աստծո զորության, առանց որի մենք կպարտվենք սատանային: Մարդն առանց Աստծո օգնության՝ չի կարող պայքարել ոչ սատանայի և ոչ էլ իր սեփական թուլությունների և մոլուցքների դեմ:

Հիսուս մեզ առաջարկում է հավատալ Իրեն, կատարել իր պատվիրանները և աղոթքով աղաչել Աստծուն, որ զորացնի մեզ, պաշտպանի չարի հարձակումներից: Իսկ որպեսզի մեր աղոթքը ընդունելի լինի Աստծո առաջ, պետք է աղոթել խոնարհությամբ՝ հասկանալով մեր մեղքերը, թուլությունները, ոչնչությունը՝ Աստծո առաջ, պետք է ոչ թե արդարանալ Աստծո առաջ, ոչ թե մտածել, թե՝ ես արդար եմ, դիմացինս՝ մեղավոր, այլ գիտակցել, որ ամենամեղավորը ե՛ս եմ, և նախ ե՛ս կարիք ունեմ Աստծո օգնության, որ կարողանամ տիրապետել ինքս ինձ և օգնեմ դիմացինին՝ հասկանալ, որ ինքն էլ սխալվում է, կարողանամ խաղաղություն հաստատել, հաշտություն կառուցել, ներել: Խոնարհությունը սկսվում է այն վայրկյանին, երբ մտածում եմ, որ իմ պահվածքի՛ց է կախված խաղաղությունը իմ միջավայրում, որ իմ յուրաքանչյուր բառը, շարժումը վճռական նշանակություն ունի, շատ ծանրակշիռ է՝ նախևառաջ Աստծո համար:

Մարդու յուրաքանչյուր բառն այնքան մեծ կարևորություն ունի Աստծո առաջ, որ նախքան իր փրկագործության ծրագիրը սկսելը, Աստված իր հրեշտակին ուղարկեց Կույս Մարիամի մոտ, որ նրանից համաձայնության խոսքը առնի: Միայն Մարիամի համաձայնությա՛մբ հնարավոր եղավ փրկագործությունը: Երբ Մարիամը հրեշտակին ասաց. «*Թող լինի ինձ քո խօսքի համաձայն*», հենց այդ վայրկյանին Աստծո Խոսքը բնակվեց և մարդկային մարմին առավ Մարիամի արգանդում, Աստված մարդացավ, որպեսզի փրկվի ամբողջ մարդկությունը: Հիշելով ավետման այս խորհրդավոր և պատմական դրվագը՝ ջանանք առավելագույն լրջությամբ վերաբերվել այն ամենին, ինչ կա մեր սրտի մեջ և թե ինչ բառերն են դուրս հորդում մեր շուրթերից: Ամեն մի բառն արտասանելուց առաջ եկե՛ք մի լավ մտածենք՝ հանդարտությամբ,

աղոթքով, հավատով և ներքին խաղաղ ուրախությամբ, որ Աստծուց է գալիս և կարող է ուղղորդել մեր ամբողջ կյանքը: Եկե՛ք գիտակցենք, որ դիմացինին ասված մեր յուրաքանչյուր բառից է կախված և՛ մեր հոգու ընթացքը դեպի Երկինք կամ դժոխք, և՛ շրջապատի մարդկանց հոգեվիճակը և կյանքի որակը: Հիշեցե՛ք, որ ձեր կյանքի յուրաքանչյուր պահը թանկ է և անվերադարձ, «*օգտագործեցե՛ք ժամանակը, քանզի օրերը չար են*», ինչպես զգուշացնում է Սուրբ Պողոսը:

Տ. Հովսեփ Գալստյան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ ԵՎ ՍՐԲԵՐ

ՎԱՐԴԱՎԱՌ.

բարձրանա՛նք Տիրոջ լեռը և պայծառակերպվե՛նք Տիրոջ հետ միասին

«*Սա՛ է Աստծո մեծ փառքի ծագման օրը, որը նոր արքայության սկիզբն է և էական Լույսի հայտնությունը և հավիտենական հույսի նկարագիրը*», այսպես է գրում է պատմահայր Մովսես Խորենացին՝ Վարդավառի տոնի մասին իր ճառում: Վարդավառը կամ պայծառակերպությունը Տիրոջ փառքի ծագման օրն է, որովհետև այդ օրը Թաբոր լեռան վրա Հիսուս Քրիստոսի սուրբ դեմքից ճառագեց աստվածային փառքը, հայտնվեց աստվածային Լույսը՝ մի երևույթ, որ մինչ այդ աշակերտները երբևէ չէին տեսել և միայն նրանցից երեքին բախտ վիճակվեց տեսնելու այդ եզակի, աստվածատուր տեսիլքը:

Ինչպե՞ս եղավ այդ երջանիկ պահը:

Ավետարանում կարդում ենք, որ Հիսուս իր երեք աշակերտների՝ Պետրոսի և երկու եղբայրների՝ Հովհաննեսի և Հակոբոսի հետ միասին առանձին բարձրացավ Թաբոր լեռը և այդտեղ տեղի ունեցավ նրա պայծառակերպությունը կամ այլակերպությունը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի կարևորագույն շատ իրադարձություններ տեղի են ունենում միշտ լեռան վրա՝ լեռան վրայից Հիսուս տվեց իր երանիների քարոզը, լեռան վրա բուժեց բազում հիվանդների, բազմացրեց հացը և կերակրեց չորս հազարին, Ձիթենյաց լեռան վրա աղոթքով սկսեց իր չարչարանաց ճանապարհը, Գողգոթայի վրա խաչը ելավ և համբարձվեց դարձյալ լեռան վրայից: Հիսուս հաճախ առանձին բարձրանում էր լեռը՝ Հորն աղոթելու համար: Աստվածաշնչում լեռը Աստծո հետ հանդիպման վայր է, Մովսեսը Սինա լեռան վրա Աստծո հետ խոսեց քառասուն օր, մարգարաները ապրում և աղոթում էին լեռների վրա:

Լեռը խորհրդանիշն է Աստծո արդարության, Աստծո սրբության, Աստծո արարչագործ զորության և վեհության: Երբ Հիսուս լեռան վրա է, Նա իր աստվածային բարձունքի վրա է, Նրա աստվածային էության հայտնությունը առավել հստակ է: Հիսուսը լեռ բարձրացավ՝ իր աշակերտներից միայն երեք ընտրյալներին տանելով, որպեսզի նրանց առաջ ցույց տա, թե իրականում ո՛վ է Ինքը, իր մարդկային տկար դեմքի ներքո թաքնված սրբազան գանձը, Իր աստվածային փառքը, աստվածային Լույսը, որով լուսավորվում է աշխարհի խավարը՝ արարչագործության սկզբից ի վեր, դա այն լույսն է, որի մասին վկայում է Հովհաննեսն իր ավետարանում. «*և լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց… Այդ ճշմարիտ Լույսն էր, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալու*», Հվհ. 1, 9: Այդ լույսը Սուրբ Երրորդության լույսն է, աստվածային էությունից բխող լույսն է, չէ՞ որ Աստված լույս է և նրա մեջ խավար չկա:

Տեր Հիսուս Քրիստոս՝ որպես Աստծո Որդի, Ի՛նքն է ճշմարիտ Լույսի Աղբյուրը, ոչ միայն նյութական լույսի, այլև՝ նախևառաջ աստվածային հավիտենական կյանքի լույսի, հոգևոր լույսի, բանականության լույսի, որից Աստված մի սրբազան մասնիկ է տալիս յուրաքանչյուր մարդ արարածի, երբ արարում է մարդու հոգին: Եվ

այդ սրբազան լույսի մասնիկը մարդու համար ամբողջ կյանքում դառնում է առաջնորդող փարոս՝ դեպի իր Արարիչը, դեպի իր լույսի Աղբյուրը, որտեղից սերում է մարդը՝ որպես լույսի որդի:

Ավետարանում կարդում ենք, որ Թաբոր լեռան վրա Հիսուսի դեմքն արեգակի պես լուսավորվեց, չէ՞ որ Ի՛նքն է ճշմարիտ Արեգակը, ինչպես Ներսես Շնորհալին է աղոթում.

«*Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա՛*»:

Տիրոջից ճառագող այդ լույսը ուրախություն տարածեց բովանդակ տիեզերքի վրա, ինչպես սքանչելի լեզվով նկարագրում է Մովսես Խորենացին.

«*Երրորդության այս Լույսը Միածինն այսօր Թաբոր լեռան վրա իր շուրջը փայլեցրեց՝ ճառագայթելով արարածներին, որով երկինքը ցնծաց, և երկիրը պայծառացավ, երկնքի վերնահարկերը բացվեցին, և լույս հոսեց դեպի ստորին խորանը, երկնքում հայրական ձայնը հնչեց, տիեզերքը որդեգրվեց, Հոգու ճառագայթը ծագեց, երկնածինները լուսազգեստվեցին, հրեշտակների խումբը պարեց երկրի վրա, հրեղենների դասերը երկնքի դռնով մտան, երկնքի օրհնությունները երկրի վրա հնչեցին, երկիրը երկնանման զարդարվեց, դրախտի դռները բացվեցին, այնտեղից արտաքսվածը պարեց նրա մեջ, կենաց ծառի հոտը բուրեց, երկիրն անմահության ծաղիկ բուսեցրեց, կյանքի լույսը ծագեց, մահու սփվերը փախավ, արդարությունը թագավորեց, մեղքերի իշխանությունը լուծարվեց, ավետարանական փողը գոչեց, տիեզերքը քնից զարթնեց, Աստծուն մարմնով եկած տեսան և նրա հետ աստվածացան*»:

Ահա՛ այստեղ է, որ լավագույն ձևով կարող ենք հասկանալ Սբ. Աթանաս Ալեքսանդրացու այն խոսքը, թե «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: Տիրոջ աշխարհ գալու իմաստը սա է՝ **մարդու բարձրացումը դեպի աստվածային բարձունքը**, մարդու վերստին ազնվացումը, մարդու նախնական արժանապատվության վերադարձը դեպի աստվածային էության գիրկը՝ դեպի այն պատիվը, որ Ադամն ու Եվան ունեին Եդեմի պարտեզում, մարդու՝ որպես տիեզերքի գլուխգործոց, իր արժանի տեղում վերահաստատվելը՝ Աստծո փառավոր լույսերի մեջ, որտեղ մարդն ապրում է Աստծո հետ ներդաշնակ կյանքով՝ իր մարդկային կամքը լիակատար համաձայնության մեջ դնելով աստվածային կամքի հետ, հաղորդվելով աստվածային սրբությանը, իր մեջ արտացոլելով աստվածային պատկերն ու նմանությունը, որով ի սկզբանե ստեղծված է և որը կորցրել էր՝ մեղքով եղծվելու հետևանքով: Քրիստոսի դեմքից ճառագող լույսը միաժամանակ ե՛ւ սրբագրեց այդ եղծումը ե՛ւ եղավ ապացույցը Աստծո խոստման, որ բոլո՛ր մարդիկ պետք է սրբագրվեն այդ եղծումից Քրիստոսի՛ թափած Արյամբ և Քրիստոսի Արյանը հաղորդվելով:

Երբ Հիսուս իր մարդկային բնության մեջ և այդ բնության միջոցով ցոլացրեց իր աստվածային լուսեղեն բնությունը, նրա հետ խոսում էին երկու սրբեր՝ Մովսեսը և Եղիան. Մովսեսը Տիրոջ օրենքի խորհրդանիշն է, որովհետև Աստված Մովսեսի միջոցով Սինա լեռան վրա տվեց իր պատվիրանների ամբողջությունը՝ Օրենքը, իր ժողովրդին, իսկ Եղիան մարգարեությունների հավաքական կերպարն է, մարգարեների, ովքեր ուղարկված էին Աստծո կողմից՝ ժողովրդին քարոզելու ապաշխարություն և խոսելու Փրկչի գալստյան մասին, գալիք փառքի մասին, որ սպասվում է յուրաքանչյուր մարդու՝ Տիրոջ լույսին հետևելու դեպքում:

Ուրեմն, այդ երկու սրբերը Աստծո խոսքի հայտնության պատմությունն են, որոնք իրենց լրումին են հասնում Քրիստոսի մեջ: Նրանք մարգարեացան Քրիստոսի մասին, որ եկավ և կատարեց նրանց մարգարեությունները:

Երբ երեք աշակերտները տեսան այս չտեսնված պատկերը, չհասկացան, թե ինչ է կատարվում, բայց ուզում էին այդ տեսարանն իրենց հետ ունենալ միշտ, որ Քրիստոսը, Եղիան և Մովսեսը մնան իրենց հետ այդտեղ. Պետրոսն առաջարկեց երեք տաղավար կառուցել՝ Տիրոջ, Եղիայի և Մովսեսի համար: Այդ օրը, ինչպես մեր սուրբ քերթողահայր Խորենացին է մեկնում և նրա հետ՝ նաև մերօրյա որոշ մեկնաբաններ (օր.՝ Ժոզեֆ Ռացինգերը), հրեաների Տաղավահարաց տոնի վերջին օրն էր: Այդ տոնը տևում էր մեկ շաբաթ, հրեաները դրսում տաղավարներ էին շինում և տաղավարներում ապրում՝ հիշելով իրենց հայրերի քառասուն տարիների դեգերումը անապատում, վրանների մեջ ապրելը՝ Եգիպտոսից դուրս գալուց հետո, երբ Աստված նրանց փրկեց գերությունից և առաջնորդեց դեպի Ավետյաց երկիր: Այդ տոնն Աստված սահմանել էր, որպեսզի իսրայելացիները հիշեն Իր մեծագործությունը և իրենց երախտագիտությունն Աստծո հանդեպ արտահայտեն՝ հավատարմությամբ, չար գործերից հրաժարվելով, մեղավոր ընթացքից դարձ կատարելով: Հիսուս, լեռան վրա պայծառակերպվելով և Մովսեսի ու Եղիայի հետ խոսելով՝ բացահայտեց Տաղավարահարաց տոնի ճշմարիտ իմաստը՝ հիշել Աստծո ողորմությունը, որն ունի պատմություն և ունի հույսի ապագա՝ Քրիստոսի հարությամբ. **բոլոր Քրիստոսին հավատացողները պետք է Քրիստոսի նման**

պայծառակերպվեն աստվածային լույսով: Քրիստոսի պայծառակերպված մարդկային բնությունը ամբո՛ղջ մարդկային բնությունն է, հետևաբար, Քրիստոսին հետևելով և Նրան միանալով հոգևոր միությամբ՝ Սուրբ Հաղորդությամբ, պետք է հասնենք Նրա պես լուսավորման, Աստվածային փառքի մեջ բնակության: Դարձյալ տեսե՛ք, թե ինչ է գրում Խորենացին. «*Լեռը ելնելով՝ մեզ իր հետ բարձրացնում էր դեպի հայրական աթոռը. և մարդկային մարմնի դեմքն արեգակնափայլ լուսազարդելով՝* ***մեր նվաստ մարմինն էր աստվածակերպում Իր փառավոր մարմնի նմանությամբ***»:

Պետրոսն իր՝ տաղավարներ կառուցելու առաջարկին ուղղակի պատասխան չստացավ Հիսուսից, բայց աշակերտները տեսան, թե ինչպես մի լուսավոր ամպ հովանի եղավ լեռան վրա, և մի ձայն ամպի միջից ասաց. «*Դա՛ է իմ սիրելի որդին, որ ունի իմ բարեհաճությունը, դրա՛ն լսեցեք*», Մտթ. 17, 5: Տերն Ի՛նքը վկայեց իր Որդու աստվածության մասին և պատվիրեց լսել նրան. սա՛ է Տիրոջ կամքը՝ որպեսզի մարդն իր սրտում ընդունի Աստծո Խոսքը և իր սի՛րտը դարձնի տաղավար՝ Աստծո բնակության համար, իր սրտում պահի Աստծո մեծ գործերը, որ կատարվել են և շարունակվում են ամեն վայրկյան կատարվել իր և ամբողջ մարդկության համար, Աստծո Լույսը վերցնի իր մեջ և ներքուստ մաքրվի, լուսավորվի:

Աստված իր վկայությամբ մարդկանց հրավիրում էր դեպի Իր լույսը և ցույց էր տալիս, թե վերջին օրը ինչպես են տեսնելու Մարդու Որդուն և ինչպիսին պետք է լինեն բոլոր նրանք, ովքեր հավատարիմ կմնան Քրիստոսին, թե ինչպես մարդկային ապականացու բնությունը կդառնա լուսե, անապական բնություն, թե ինչպես են ծագելու լույսի որդիները, ըստ Քրիստոսի խոստման, որ տվեց՝ որոմների մասին առակը պատմելիս. «*Այդժամ արդարության որդիները արեգակի պես կծագեն երկնքի արքայության մեջ*», Մտթ. 13, 43: Աստված Քրիստոսի լույսով մաքրվածներին կպարգևի Քրիստոսի փառքը, Սուրբ Երրորդության աստվածային կյանքին մասնակցելու երանությունը:

Տիրոջ պայծառակերպության օրը առաքյալները տոնում էին նաև որպես իրենց առաքելության սկիզբ, երբ Սուրբ Հոգով լուսավորված՝ սկսեցին վարժվել Հոգու շնորհների գործադրության մեջ և ամբողջ աշխարհում սկսեցին տարածել Տիրոջ լույսը և ավար առնել բոլորի մտքերն ու հոգիները, այստեղից էլ, Խորենացու խոսքերով, ծագում է «Վարդավառ» բառը, որ միայն հայ ազգն է տվել այս տոնին, այսինքն՝ «*արդ, ավար*»՝ հիմա ժամն է՝ ավար առնելու՝ հանուն Քրիստոսի. «*Արդ, ավա՛ր է, ելե՛ք փիեզերքով մեկ՝ գերությամբ գերելու, ավար առնելու, պարգևներ բաշխելու և տալու մարդու որդիներին», ինչպես որ գրում է Պողոսը. «Բոլոր մտքերը գերում ենք՝ ի հնազանդություն Քրիստոսի*»», Բ Կորնթ. 10, 5»:

Բայց Խորենացին մեկ այլ գեղեցիկ մեկնություն էլ է ավելացնում, որ հարստացնում է Վարդավառ բառի իմաստը. «*Այս տոնը արդ, ավար է, որը Վարդավառ է կոչում Եկեղեցին՝ այդ օրն առաքինության լուսերանգ և հուսահոտ բոցատերև վարդերով հարսնազգեստ պսակվելով և հրճվելով*»:

Ուրեմն, այսօր ամբողջ Եկեղեցի՛ն է հրճվում՝ վարդերով զարդարված, վարդի նման բացվելով Տիրոջ լույսի ջերմությունից և վարդի նման բուրելով անուշահոտություն, որ Քրիստոսի բուրմունքն է, որ կյանք է տալիս, ըստ Պողոսի խոսքերի: Այսօր ամբողջ Եկեղեցին, յուրաքանչյուր քրիստոնյա կոչված է աշխարհով մեկ տարածելու Քրիստոսի բուրմունքը՝ իր մաքրամաքուր կյանքով, սուրբ մտածումներով, անբեկանելի հույսով և լավատեսությամբ, թե ամեն չարիք խորտակվելու է, ամեն պատերազմ դադարելու է, երկրի վրա բուսնելու է խաղաղության վարդը, որ ամեն սուր դառնալու է դաշտում աշխատող մի մանգաղ, որ գառն անվնաս մակաղելու է առյուծի կողքին, ըստ Եսայու մարգարեության:

Երբ Թաբոր լեռան վրա աշակերտները լսեցին երկնքից հնչող տերունական ձայնը, երեսն ի վայր ընկան և սաստիկ վախեցան, բայց Հիսուս մոտեցավ, բռնեց նրանց և ասաց. «**Ոտքի ելե՛ք և մի՛ վախեցեք**»: Այս խոսքերի մեջ է խտանում Տիրոջ պայծառակերպության, Վարդավառի ամբողջ տոնական իմաստը՝ Հիսուս նրանց առջև իր աստվածային լույսով պայծառակեպվեց, որպեսզի փարատի նրանց վախը՝ ի դեմս Իր Խաչի, Իր անվան համար նրանց կրելիք հալածանքների, նահատակությունների, պատերազմների և ամեն տեսակ աղետների, որովհետև Ի՛նքն է այն լույսը, որին այս աշխարհի խավարը չի կարող պարտության մատնել, և Ի՛նքն է, որ բռնել է նրանց ու քաջալերում է, և այդ պատճառով էլ նրան հավատացողը հաղթելու է խավարի ուժերին. ամեն:

Տ. Հովսեփ Գալստյան
18 հուլիսի, 2020

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ Հայկական Կարիտասի աշխատակիցներ, կամավորականներ և շահառուներ, այս հոգևոր թերթում, ինչպես տեսաք թերթի նախորդ համարում, կարող են լինել նաև ձեր հոդվածները, մտածումները, բանաստեղծությունները, այլ ստեղծագործություններ՝ հոգևոր կամ այլ բնույթի: Թերթը հոգևոր-մշակութային է, ուստի հոգևոր նյութերից բացի կարող են լինել նաև այլաբնույթ նյութեր, որոնք ներկայացնում են ձեզ կամ Կարիտասի առաքելությունը և կարող են օգտակար լինել Կարիտասի մեծ ընտանիքի ընդհանուր զարգացմանը: Այս փոքրիկ թերթը նաև հարթակ է՝ ձեր ինքնարտահայտման համար:

Միշտ բաց ենք՝ առաջարկությունների և նոր գաղափարների համար:

Համավարակից հետո, երբ կենտրոններում վերսկսվի շահառուների հետ անմիջական աշխատանքը, ես հանդիպումների ընթացքում այս մասին կխոսեմ նաև շահառուների հետ, որպեսզի նրանք էլ ակտիվորեն մասնակցեն:

Դրանք կարող եք ներկայացնել ինձ կամ Հայկական Կարիտասի տնօրինությանը և ծրագրերի ղեկավարներին:

Աստծուած օրհնի՛ եւ պահպանի՛ ձեզ, ձեր ընտանիքները եւ մեր երկիրը. Ամեն:

Տ. Հովսեփ

Կազմեց՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
հեռ.՝ +37455698957, levongalstyanarmcatholic@gmail.com

Տպագրողներ՝

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի Հայ Կաթողիկէ Առաջնորդարան

*Տրվում է **անվճար***

Գյումրի, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, 2020թ.